

կեանք սկսել: Նա յորդորում է և ալիօնօվիկին բժշկուել իր զաւից, դիմել ալիօնօվիկ հիւանդների համար շինած հիւանդանոցը: Նա սփոփում է և նաստեային, «Եթէ ինքդ հաւատում ես որ դու ունեցել ես խական սէր, ուրեմն այդ եղել է»:

Սակայն երկարատև չի լինում այդ օտարականի ազդեցութիւնը. երբ Վասիլիսան եռ եկած ջուր է ածում՝ իր քրոջ ոտերի վրայ, վրէծ հանելով սիրականին խլելու համար, և ընդհանուր իրարանցման ժամանակ Պեղելը սպանում է ապաստարանի տէր ծերուկին, խափյն յանցանքի տեղն է զալս պօլիցիան. և անցաթուղթ չունեցող Լուկան անհետանում է: Յաւեց իրան կորցրած Նատաչան յայտնում է սստիկանին թէ Վասիլիսան և Վայսկան առաջուց պարմանաւորուել էին սպանել ծերուկին և այդպիսով ազատուել նրանից: Յանցաւորները կալանաւորում են:

Լուկայի անհետանալուց յետոյ ապաստարանի մէջ, որին տէր են դառնում կարկանդակներ վաճառող կինը և նրա հետ ամուսնացած «օրօնօվօյը», վերսկսւում է հին կեանքը, բոլորը յիշում են խելօր ու բարի օտարականի խօսքերը, վերաբերմունքը, մտարերում է իւրաքանչիւրը իր անցեալլ. գարձեալ թղթախաղ, արբեցութիւն, դատողութիւններ: Վերջում բոլորը սկսում են երգել մի սրտառուչ, տիտոր և միաժամանակ ազատասէր երգ, որ ընդհատում է «բարօնի» յայտնած բաթով, թէ ալիօնօվիկ դերասանը ինքն իրան կախեց:

Ես կարողացայ հաղորդել ընթերցովին այդ զօրեղ գրուածքի միայն կմախիը, որովհետև Գօրկիի այդ պիեսը դեռ չի տըպուած, իսկ յիշողութեանս մէջ, այն էլ մի ամիս անց, շատ բան բնականաբար, աղօտ կերպով է պահպանուել: Կարելի է համարձակ ասել, որ այլ բեմի վրայ երբէք այն աջողութիւնը չէր ունենալ „Հա դհԵ“-ն, ինչ որ նա ունեցաւ Գեղարուեստական թատրոնի նոչակաւոր խմբի աննուան խաղով և զարմանալի դրուածքով: Այդ երկը իսկապէս գրամա չէ սովորական մարդով, այլ հզօր վրձինով նկարուած զարմանալի տեսարաններ, որոնք առիթ են տալիս հեղինակին հասարակութեան մէջ որոշ հայեացքներ արծարծելու:

I. II.

---

Յունուարի 9-ից սկսած հայոց գրամատիկական ընկերութեան խմբի ներկայացումներին մասնակցում է տիկին Արրանոյցը:

Մինչև այս տողերս գրելլ տիկին Արրանոյցը բեմ է դուրս

եկել երեք անգամ—«Կամելիազարդ տիկնոջ», «Կեանքի արժեքի» և «Շղթաների» մէջ:

Ես մտադիր չեմ մանրամասն հաշիւ տալ ընթերցողներին այդ ներկայացումների մասին, այլ կ'ուզէի միայն յայտնել այս տեղ թոռոցիկ տպաւորութիւններու:

Ես առիթ եմ ունեցել տեսնելու «Կամելիազարդ տիկնոջ» մէջ այնպիսի բեմական հակաների խաղը, ինչպէս են էլեօնորա Դուզէ և Սառա Բէռնար, և այնուամենայնիւ ինձ ահագին գեղարուեստական հաճոյք պատճառեց տիկին Սիրանոյշի խաղը, որ սկզբից մինչև վերջը խորապէս մտածուած էր և զգացուած:

Տիկին Սիրանոյշին յաջողուեց պարզել հասարակութեան առաջ անկեղծ սիրոյ համար ստեղծուած, բայց՝ կեանքի աննըսպաստ պայմանների չնորդիւ՝ ծախու սիրով ապրող հերոսուհու հոգերանութիւնը և համակրութիւն ներշնչել դէպի այն յաներժ կանացին և վեհօրէն մարդկայինը, որ ապրում է Մ'արզրիս Գօթիէի հոգու խորքում՝ կեանքի պղտոր ալիքներից մնացած տղմի տակ:

Պակաս նպաստաւոր տպաւորութիւն թողեց իմ վրայ տիկնոյ խաղը Սննա Դեմուրինայի դերում («Կեանքի արժեքը»):

Իմ կարծիքով Դեմուրինան պէտք է հիպնօզացածի նման լինի Մօրսկոյի ինքնասպանութիւնից յետոյ և յամենայն դէպս աւելի ողբերգորէն հանդիսատ կարդայ նրա նամակը:

«Շղթաներ» պիէսի ներկայացումը մի նոր առիթ էր տիկին Սիրանոյշի համար իր բեմական տաղանդը ամբողջ փայրի ցոյց տալու: Վօլրինցեւայի դերը չնորհալի տիկինը խաղաց ուղղակի վիրտուոզ կերպով:

Եւ առիթ եմ ունեցել տեսնել տիկին Սիրանոյշի խաղը մի քանի տարի առաջ, և այժմ ինձ թւում է, թէ տիկինը աւելի ես կատարելագործել է իր խաղը, որ աչքի էր ընկնում ոչ միայն այն ժամանակ, այլ և ինչպէս ականատես անձինք վկայել և վկայում են, նոյն խակ սրանից 20—25 տարի առաջ, երբ տիկինը խաղում էր Աղամեանի պէս տաղանդի հետ և շրջապատուած էր օր. Աստղիկի, տիկ. Հրաշեայի և Գարագաշեան քոյրերի նման բեմական աստղերով: Ինձ թւում է, որ տիկինոջ խաղը այժմ աւելի բնական է, աւելի հարթ, շարժումները աւելի բազմակերպ, արտասանութիւնը աւելի որոշ: Տիկին Սիրանոյշը այժմ խաղում է սկզբից մինչև վերջը հաւասար եռանշով և ուշադրութեամբ, մինչդեռ առաջ նրա խաղի մէջ դերի մի քանի ուժեղ կէտերը փայլուն կերպով էին անցնում, խակ մնացած մասերը, ինչպէս ոռուներն ասում են, ճմռաւում էին:

Այդ ոչ միայն պատիւ է բերում ամիսոջը, այլ և յոյս է տալիս մեզ կարծելու, որ գեռ նրա տաղանդը կանգ չէ առել իր առաջադիմութեան մէջ և որ գուցից նա գեռ հանելու է իր գաղաթնակէախն և նոր երեան եկող ոյժերի ու պ. պ. Արէլեանի և Պետրոսեանի հետ տալու հայկական բեմին իր նախկին փայլը:

Ի դէպ է ասել, այս տարի լրանում է տիկին Սիրանոյշի ըեւմական գործունէութեան երեսնամեակը: Որքան մեզ յայտնի է, Հայոց Դրամատիկական ընկերութիւն վարչութիւնը որոշել է հանդիսաւոր կերպով տօնել յարգելի տիկնոջ յորելեանը առաջիկայ սէղնի սկզբին:

Կիւրակի յունուարի 26-ին ի յիշատակ հանգուցեալ տրամիկ Աղասեանի՝ արտիստիկական թատրոնում հայոց Դրամատիկական ընկ. վարչութիւնը կազմել էր մի յուշահանդէս:

Ամբողջը կազմուած էր երեք մասից. նախ ներկայացրին մի փոքրիկ մելոդրամ՝ Աղանարզան, որ տասը տարի առաջ թիվվասում առաջին անդամ խաղացել է Աղամեանը: Այս պիեսը խաղացին մեր բեմի չորս լաւագոյն ոյժերը—տ. ա. Սիրանոյշ, Մայսուրեան, պ. պ. Պետրոսեան և Արէլեան: Ներկայացումը լաւ անցաւ:

Յուշահանդիսի երկրորդ սասում Աղամեանի պսակուած բիւստի առաջ պ. Մամաջանեանի երգեցիկ խումբը երգեց մեծ արտիստի անուանը նուիրուած մի բաւական լաւ կանատտ, որ հասարակութիւնն ընդունեց ողևորուած ծափահարութիւններով և մի քանի անդամ կրկնել տուաւ: Պ. Մամաջանի խումբը այնուհետև էլլի մի քանի ժողովրդական խմբական երգեր երգեց, որոնք շատ լաւ տպաւորութիւն գործեցին:

Այս յուշահանդիսի ամենահետաքրքիր մասը Աղամեանի ապօթէօգն էր: Դա մի լաւ մտածուած և յաջող կատարուած իենականի պատկեր էր: Բարձր պատուանդանի վրայ նստած է Աղամեանը, և երկու մուսաներ պատկեր բռնել զլիին: Աւելի վար երկու կարգ շարուած՝ մի քանի գերասաններ ներկայացնում են Աղամեանին իր խաղացած գերերում՝ բնորոշ պողաներ ընդունած: բեմի վրայ երկու կողմում շարուած են գերասանուհիները ու գերասանները՝ երեսները դարձրած դէպի վեր, դէպի Աղամեանը, ա. Սիրանոյշը հանդիսաւոր քայլուածքով բարձրանում է և մի մեծ պակ զնում Աղամեանի ուաքերի տակ:

Ամբողջը շատ յաջող էր. հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով արտայայտեց իր գոհունակութիւնը: